

- 21. Հ. Յակոբ
- 22. Հ. Անտոն վարդապետ
- 23. Հ. Իգնատիոս վարդապետ
- 24. Հ. Սիմոն վարդապետ
- 25. Հ. Ջաքարիա վարդապետ
- 26. Հ. Գարրիէլ վարդապետ
- 27. Հ. Ղուկաս վարդապետ
- 28. Հ. Բարթոլոմէոս
- 29. Հ. Յովսէփ
- 30. Հ. Անդրէաս վարդապետ
- 31. Հ. Ստեփան վարդապետ
- 32. Հ. Մկրտիչ վարդապետ
- 33. Հ. Ղազար
- 34. Հ. Մարկոս վարդապետ
- 35. Հ. Միքայէլ
- 36. Հ. Գէորգ վարդապետ
- 37. Հ. Վրթանէս վարդապետ
- 38. Հ. Կարապետ վարդապետ
- 39. Հ. Յակոբոս
- 40. Հ. Բարսեղ
- 41. Հ. Ներսէս
- 42. Հ. Թադէոս
- 43. Հ. Սահակ
- 44. Հ. Գարրիէլ
- 45. Հ. Յովհաննէս
- 46. Հ. Անտոն
- 47. Եղբայր Միքայէլ
- 48. Եղբայր Դանիէլ
- 49. Եղբայր Մեսրոպ
- 50. Եղբայր Անանիա
- 51. Եղբայր Ստեփան
- 52. Եղբայր Գրիգոր
- 53. Եղբայր Պօղոս
- 54. Եղբայր Նիկողայոս

Ի Բատարանի յատուկ անուանց զնէ սյուղէս. Աշակերտեաց ի կարգ կրօնաւորութեան անձինս իրրեւ 58:

Ի յայրելի 30, 1749, 50, յետ երկց աւուրց վախճանելոյ Տեառն Մխիթարայ առաջնոյ Աբրահօր մերոյ, եղև փոխանորդ Աբրայի՝ Հ. Եղիա վարդապետն:

Ի մայրախ սկսան շինուածն դանդակատան մինչև ցայն վայր բարձրութիւն կառուցանի դանդակաց տեղին եւ կախարան:

Յայրելի 6, 1750, 51, յերկուշարաթի Նոր Կիւրակէի, ընտրեցաւ Աբրահայր Հ. Ստեփաննոս վարդապետ Կոստանդնուպոլսեցի Մելքոնեան:

**ՄԽԻԹԱՐ ԱՐԲԱՅԻ
ՏԱՊԱՆԱԳՐԻՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ
Հ. ՄԿՐՏԻՉ Վ. ԱՆԱՆԵԱՆԷ**

Ա. Զ. Գ.

Մխիթար Աբբասի «Համառօտութիւն վարուց» գործին մէջ (հմմտ. աստ էջ 360) կը յիշատակուի, թէ անոր գամբանին վրայ փորագրուած ոտանար տապանագիրը յօրինած է Հ. Մկրտիչ Անանիայէնց 1750ին: Այս գամբանագիրը յառաջ բերած են Գեր. Ագոնց եւ Հ. Թորոսեան, առանց յիշելու հեղինակին անունը: Այդ ոտանար ներքողը գրուած է խորհրդանշանով, եւ կը մնայ գրեթէ բոլոր ընթերցողներու համար, ինչպէս կը կարծենք, անիմանալի: Թէ արդեօք ձեռնարկուած է երբեք լուծելու այդ «Բնար բերութ»ը, յիշատակութիւն մը չունին այդ մասին իր կենսագիրները: Այս պատճառով մեծագոյն անակնկալն էր ինձ համար, երբ Մեծ. Հ. Ն. Վ. Ակիմեան իմ ուշադրութիւնն հրաւիրեց այս գրութեան վրայ, որ պահուած է վիեննայի Մխիթարեան Մատենադարանի Թ. 610 Ձեռագրին մէջ, գրուած Կ. Պոլիս Գրիգոր գրչէ 1787 օգոստոս—1788 սեպտեմբեր տարւոյն մէջ¹: Ձեռագիրս Քղ. 51ա—55բ կը պարունակէ այս Տապանագիրն եւ անոր Մեկնութիւնը: Գրութեան վերջը հեղինակին մասին գրուած է. «Մեկնեալ ի նորին աշակերտէ ի Մկրտիչ վարդապետէ»: Այս Մկրտիչ վարդապետը, որ Մխիթարի աշակերտն էր, միայն Հ. Մկրտիչ Անանիայէնցը կարող է ըլլալ, որ մեր Մխիթարեանց Հարց ցանկին մէջ անուանուած է Հ. Մ. (Բուզայեան) Անանեան, ծնած Կ. Պոլիս 1715, քահանայ ձեռնադրուած 1739ին եւ վախճանուած 6 սեպտեմբեր 1777ին Թեսաղոնիկէ: Կ'ըսուի թէ սա «Գլխաւոր գործակիցն» էր Կ. Պոլիսի Հայկազեան լեզուի Բաղրէի Ա. եւ Բ. հատորներուն²: Մեկնութեան պարզ ընթերցումովն իսկ կարելի է գուշակել, թէ Տապանագրին յօրինողն ու մեկնիչը միեւնոյն անձն է: Այստեղ Հ. Մկրտիչ ոչ միայն խորհրդանշան ոտանարիս խորհրդանշանը կը մեկնէ, այլ նաեւ գեղեցիկ կերպով

¹ Ձեռագրիս նկարագրութիւնը տուած է Հ. Յ. Տաշեան, Մատենագրական մանր Ռուս. նախորդութիւններ, Բ., վիեննա 1901, էջ 156—158:
² Հ. Գ. Չարիանիւեան, Հայկական Մատենագիտութիւն, վիեննայի 1883, էջ 87: Ասկէ՝ Հ. Ա. Ղազիկեան, Հայկական Նոր Մատենագիտութիւն, վիեննայի 1909—1912, էջ 309—310:

պով կը պատկերացնէ այն միտքերն ու յղացումները, զոր նա ունեցած է, գա-
նունք այդ եզական եւ նոյն իսկ խուժադուժ տարագով ներկայացնելէ առաջ :
Նա եղած է Միսիթարի աշակերտը, անոր խնամքը վայելած, անոր նկարագիրն
իր բոլոր յատկանշական կողմերովն ուսումնասիրած : Իբրեւ այսպիսի քան-
կագին են մեզի անոր տուած նկարագրական գիծերը Միսիթարի կեանքէն :
Ականատեսի վկայութիւններ են անոնք, հետեւաբար արժէքաւոր :

Գրութեանս այս հանգամանքը յորդորեց մեզ հրատարակել զայն իբրեւ
չշահագործուած աղբիւր Միսիթարի կենսագրութեան համար :

Թէ Գրիգոր գրիչ ի՞նչ օրինակէ հանած է իր արտագրութիւնը, չէ նշա-
նակուած : Անոր սկզբնագիրը լուսալի է գտնել վեներտիկի Միսիթարեանց
Դիւանին եւ կամ Մատենադարանին մէջ :

Մեր հրատարակութիւնը կատարուած է ցայժմ ծանօթ միակ օրինակին
համաձայն : Ուղղած ենք միայն դերբայի օղ գրչութիւնը՝ ոչի : Այլ շեղում-
ներ նշանակուած են ծանօթութիւններու մէջ :

Հ. ՊԵՏՐՈՍ ՏԵՐ-ՊՕՂՈՍԵԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՎԵՐՏՆՈՒԹԵԱՆ ՔԱՆԳԱԿԵԼՈՑ Ի ՎԵՐԱՑ
ՏԵՊԵՆԻ ԳԵՐԱՊԵՆՉ. ԲԸՐՈՒՆՆՊԵՏԻՆ ՄԵՐՈՑ ՄԵՒԹԱՐԱՐԵՑ ԱՐԲԸՅԻՆ

ՔԱՐ ՔԵՐՈՒԹ ՀՈԳԵՏԱԻՊ
ՆԵՐԿՈՒՌ ՄԱՏԻՆ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՊ :

Քնար քերութիւն, այսինքն քնար ճարտարագործ, որ է վարպետարան :
Հոգետալիդ, այսինքն հոգեհոգ, որ է նուազեալ հոգեւորապէս կամ Հոգեւով
սրբով : Ներկուռ մատին, այսինքն ամենահմուտ կամ ամենարուեստ մատին :
Աստուածամիդ, այսինքն ճշդ աստուածայնոյ. իբր թէ ասի. Հոգեհոգ եւ
ճարտարագործ քնար՝ ամենարուեստ եւ աստուածամիդ մատին, այսինքն է
Հոգեւոյն սրբոյ. զի որպէս սեպհական է Որդւոյ անուանիլ աջ, նոյնպէս եւ
Հոգեւոյն սրբոյ մատն. նորին աղագաւ եւ ճիղ աստուածային, զի որ մատն է,
նոյն եւ ճիւղ է, ըստ այնմ Նարեկ. ՀԸ. «Մի թուեսցես ի ճիւղս երկրաստեղծ
մատանցդ զգիւտս գործոցս» : Իսկ թէ բառս քնար զուամէ՞ ասի եւ զի՞նչ
այլարանէ, տեսցես ի ներքոյ ի սողն թակերտ արբայ :

ԱԶԳԵԱԼ ՍԵՐԱՍՏ ՄԱՐՁԵՆ ԽԱԻՊ :

Ազդեալ սերաստ, այսինքն հնչեալ ի Սերաստիոյ : Մարգէն խալիդ, այս-
ինքն ի կողմանէ դրախտին, իբր թէ ասի. Քնար հնչեալ ի դրախտանման կող-
մանցն Սերաստիոյ. գործէ լիազոյն տեսցես ի յաջորդ սողան :

ԲԱԿԵՐՏ ԱՐԲԱՑ ԼՈՒՍԱՇԱԻՊ :

Բակերտ արբայ, այսինքն վարդապետ եւ արբայ : Լուսաշալիդ, այսինքն
ուենող գլուսաւոր զնացս երկնակրօն վարուց : Արդ սողս այս է անուն վերին
երեքտողեան ոտանաւորացն, որ բոլորէ ընդ նոսա զբանն, ըստ այնմ օրի-
նակի. Միսիթար վարդապետն արբայ լուսաաշալիդ՝ է քնար հոգեւոյն սրբոյ՝
հնչեալ ի Սերաստիոյ : Հնչելն ի Սերաստիոյ, ցուցանէ զլինել նորա սերաս-
տացի : Իսկ քնար բառն այլարանէ զգոյ նորա գործարան քարոզութեանց. զի
որպէս քնարն է գործի նուազաց քնարահարին, նոյնպէս Միսիթար արբայն էր
գործի քարոզութեան Հոգեւոյն սրբոյ. զի բովանդակ կեանք նորա էր ի քա-
րոզիլ զբանն կենաց զազդեալն ի Հոգեւոյն. զոր խօսէր ոչ միայն ի առէ, այլ
եւ ի զիշերի. եւ բազում անգամ նաեւ ի քուն հանգստեան, մինչեւ ստուգել
յանձն իւր զերգն զայն. «Ես ննջեմ եւ սիրտ իմ արթուն կայ». Եր. . Ե. 2 :

ՔԱՏԱԿ ՄԱՐՄՆՈՑՆ ԿԱՅՏԱՌ Դ ՈՒՂԻՊ :

Քատակ մարմնոյն, այսինքն կերպարան մարմնոյն : Կայտառ և ուղիղ.
այսինքն զուարթ եւ ուղիղ : Վասն զի ըստ տեսլեան դիմացն էր ուրախ եւ
զեղեցիկ եւ փառացի. ըստ զրից մարմնոյն՝ բարեյօղ, քաջալանջ եւ ուղղա-
նալիկ մեկնութեանց... ըստ պատճենին եղելոյ ի վերագոյն անդր :

1 2. Օրինակ մեկնութեանց... ըստ պատճենին եղելոյ ի վերագոյն անդր :

բերձ. որովք զաչս անսողաց յափշտակէր ի սէր, եւ ամենայն ոք յառաջին տեսոյն մակարեւէր զվեհանձնութիւն նորա:

ԱՆՃԱՌ ԱՆՀԱՍ՝ ԽՈՐՈՅ ԲԱՒԻՂ:

Անճառ անհաս խորոց, այսինքն անպարտելի եւ անհասանելի խորոց. այս է խորին իմաստից եւ հանճարոյ: Բաւիղ, այսինքն խոռոչ կամ ծոց խոր եւ բազմապարփակ: Իբր թէ ասի. Մխիթար արքայն էր ընդունարան խորին եւ անպատում գիտութեանց եւ իմաստութեանց եւ ունակ անգուղական հանճարոյ. որով խոյանայր ի խորս ծածուկ իմանալեաց եւ հասու լինէր նուրբ եւ անհաս իմացութեանց. ուստի իմանալ նորա առաւել երեւէր մարդաբէնալ քան իմանալ. վասն որոյ եւ ոմանք փոխանակ կոչելոյ զնա անհամեմատ մտացի՝ կոչեցին Մխոք:

ՂԱՄԲԱՐԲ ԾՆՈՐՀԱՅ ԳԵՐ ԾԱՌԱՒԻՂ:

Ղամբարբ շնորհաց, այսինքն ջահ շնորհաց. գեր շառաւիղ, այսինքն ունող գերագոյն շառաւիղաց կամ գերազանցօրէն ճառագայթող: Իբր թէ ասի. Իսկ ջահք շնորհաց նորա էին յոյժ ճառագայթաւոր, եւ սովաւ նշանակի գոլ նորա եօթնարիեան շնորհօք լի, եւ կարի յիրաւունս, զի էր գերապանձ գիտուն, իմաստուն, հանճարեղ, խորհրդական, երկիւղած, աստուածապաշտ եւ աստուածարեալ. այսինքն յԱստուած զօրացեալ եւ արիացեալ. եւ այսոքիկ են եօթնջահան պարզեւք Հոգւոյն սրբոյ, որպէս թուէ մարդաբէն Եսայի ԺԱ.:

ՅԱՅՏԻՉ ԼՈՒՍՈՅ ԵԼԱՅ ԾԱՌԻՂ:

Յայտիչ լուսոյ, այսինքն ծագող կամ ճառագայթող լուսոյ: Ելաց շաւիղ, այսինքն կուրաց ճանապարհ: Որպէս թէ ասէ. Մխիթար արքայն էր Լուսաւորիչ միթագնելոց եւ առաջնորդ կուրացելոց: Եւ յոյժ ճշմարիտ, զի զլոյս շնորհացն Աստուծոյ ոչ հեղձուցանէր յանձին, այլ աննախանձ առ ամենեսին արծարծանէր. զտգէտս ուսուցանէր, զտկարս նախախնամէր, զգոյթակղեալս հաստատէր, զկործանեալս արձանացուցանէր, մոլորելոյն առաջնորդէր, վերաւորելոյն զարման մատուցանէր, եւ առ հասարակ ամենայն կարօտելոց² ի թիկունս հասանէր. եւ չէր ոք որ զխմէր ի նա եւ գերախոսիս ինչ ոչ ընդունէր:

ԲԱՆՃԱՆ ԳԻՏՆՈՅ ԻՄԱՍՏ ԱՆՆԻՆՁ. ԱԶԳՈՒ ՈՒՍԱՒ ԻՆՔՆԻՆ ԱՆՁԻՆՁ:

Բախնան գիտնոց, այս ինքն խրախճան կամ խրախացուցիչ գիտնոց: Իմաստ անջիւնց, այսինքն իմաստութիւն անթառամ եւ անեղձ: Ազդու ուսաւ, այսինքն զօրեղ ուսաւ կամ քաջ ուսաւ: Ինքնին անջիւնց, այսինքն ինքեամբ անջնջելի: Իբրեւ թէ ասէ. Չամենայն անթառամ իմաստութիւն եւ գիտութիւն խրախացուցիչ զգօնացելոց՝ ուսաւ անջնջելի՝ անձամբ անձին: Գանդի Հայրս այս մեծ իբրեւ զայլ գիտունս ոչ եմուտ ի Դպրանոցս, եւ ոչ ստացաւ իւր վարդապետս զասատուս, այլ որ զինչ գիտէր, զամենայն քաջաջան ընթերցուածովք ինքնին ուսաւ, ոչ վեր ի վերոյ, այլ ամենախոր եւ ամենակատար. մինչեւ ամօք բազմօք յոգունց ուսոյց ի համալսարանի զամենայն ազգ

² 2. կատարելոց:

մակացութեանց, այս է փիլիսոփայական եւ աստուածարանական գիտութեանց, զորս եւ ի գրի արձանացոյց՝ ի յիշատակ յաւիտենից: Եւ այսմ մարթեղեւ լինել մասամբ ինչ յաղագս անհամեմատ մտավարժութեան իւրոյ, եւ մասամբ ինչ յաղագս երկնածիր պարզեւաց, որոց ասպնջականն էր ի մանկութենէ:

ԽՄԲԻՑ ՈՒՍՈՅՑ ԲԻՒՐՈՅ ԱՌԻՆՁ:

Խմբից ուսոյց, այսինքն դասուց ուսոյց. բիւրոց առինչ, այսինքն բազմաց առնչացելոց: Որպէս թէ ասէ. Ուսոյց բազում դասուց աշակերտաց, առնչացելոց ընդ ինքեան, զի աշակերտն է առնչակից վարդապետի: Այլ թէ զի՞նչ ուսոյց, ասի ի յաջորդ տողը:

ՕՃԱՆ ՈԳՒՈՅ ՄՏԱՅ ԾՌԻՆՁ:

Օճան ոգւոց, այսինքն արդասիս եւ օժիտս հոգւոց. մտաց շոխնչ, այսինքն մտաց նուագս: Արդ այս տող է մասն վերին տողին եւ ընդ նմա ձեւացուցանէ զմի բան, այսպէս. Մխիթար արքայն ուսոյց բազում դասուց աշակերտաց արդասիս եւ օժիտս հոգւոց: Եւ սոքօք նշանակին ամենայն աղղք գիտութեանց եւ խոհականութեանց եւ վերլուծութեանց եւ համայն լուսաւորութեանց, որք են մարդոյ հոգեւորական օժիտք եւ արդասիք, այսինքն արդիւնք եւ պտուղք առատք: Նաեւ մտաց մարդոյ իբրեւ գնուագս երդոց, քաղցրութեանց անուշարարից քան զխորիստ մեղու. վասն որոյ ըստ Դաւիթ Անյաղթին. «Որք միանգամ այսոցիկ հանդիպին, ծագիւ մատին առ ի սոցանէն ճաշակեալք, ամենայն կենցաղական հոգոց բարեւ մնալ ասեն, եւ ողջախոհ իմն մոլութեամբ առ այստիկ վարեալք բերին», որպէս ասէ նա³:

ՍՈՓԵՐՍ ԳՐԵԱՅ ՅԱՆՏԻ ՈՉԻՆՁ. ԱՍԲԱՆԱԳԵԱՆ ՏՈՀՄԻՍ ՍԱՏՐԻՆՁ:

Սոփերս գրեաց, այսինքն մատենան գրեաց. յախտէ ոչինչ, այսինքն ազատս յախտէ եւ ի մոլորութենէ: Զի ոչ ոք յուղղամտաց յամենայն գիրս նորա կարէ գտանել ինչ, որ ունիցի զնշմարանս մոլորութեան կամ զհոտ հպարտութեան կամ նախանձարեկութեան եւ կամ թշնամանասիրութեան. զի զոր ինչ գրէ, զամենայն խօսի ճշմարտութեամբ, երկիւղածութեամբ, խոնարհութեամբ, խոհեմութեամբ եւ սիրով, մինչեւ ճմլէ եւ գսիրտ թշնամեաց, վասն որոյ եւ ամենայն մատենաբ⁴ նորա են Ասքանագեան տոհմիս, այսինքն Հայոց ազգիս սատրիկց, այսինքն իբրեւ զսախտանձ կամ որպէս զնարս հոգեւոր, զմայլարարք եւ բերկրեցուցիչք, եւ ի նոսա մանաւանդ Գիրք տաղասացութեանն, եւ բազում ազգք ստանաւորաց, որպէս յայտ է գիտակաց:

ՍԱՅԹԱԲ ԶԱՐԻՆ ԳՈՌՈՅ ԿՈՒՆՁ. ՏԱՐԱՒ ԱՆԲԱՒ ԻՐԲԵՒ ԶԲՐԻՆՁ:

Սայթաբ չարին, այսինքն սայթաթիւ, գոռոց կռիւնչ, այսինքն զոտացմանց մոնչիւնս, որ է խորխորմանց սպառնալիս: Տարաւ անբաւ. այսինքն կրեաց անհամարս. իբրեւ գիրիկնչ. այսինքն նման հանգարտ երնջոյ: Արդ

³ Գիրք Սահմանոց, վեհեակի 1833, էջ 120:
⁴ 2. մատենան:

զամ ընդ նոսա ծիծաղէր: Ապա ճշմարտիւ ըստ ասից հոգեկիր հոկտորին՝ էր բարձր եւ խոնարհ, որ է կատարեալ չափ մեծութեան, որով նմանին մարդիկ Աստուծոյ:

ՈՂՈՔ ՅԱԽՏԻՆ ԳԱՂԹԷՐ ՊԱՇՏՕՆ:

Այսինքն ի շողոքորթական աստին պաշտօն տանելոյ կամ պաշտամանէ՝ գաղթէր, այսինքն փախչէր: Իբր թէ ասի. փախնոյր ի ծառայելոյ շողոքորթութեան կամ ի շողոքորթութենէ: Վասն որոյ բնաւ չտեսաւ ի կեանս իւր շողոքորթել զոք, այլ յամենայն դործս եւ ի բանս իւր սիրէր զպարզութիւն եւ զուղղամտութիւն. վասն որոյ ի դիպելն շողոքորթաց՝ խոյս տայր կամ զգէմս իւր դարձուցանէր եւ կամ խոժոռաղէմ նայէր:

ՅԱՍՊԻՍՆ ՀԱՅՈՑ ԱՐԺԱՆՆ Ի ՏՕՆ:

Այսինքն Մխիթար արքայն, որ էր Հայոց ազգին իբրեւ զակն յասպիս ի վարդ եւ ի յօգտակարութիւն, արժանաւորն մեծահանգէս տօնեալ լինելոյ:

ՆՈՒԱԳ ՈՍԿԻ ԸՆԾԱՅ Ի ՁՕՆ:

Նուագ ոսկի, այսինքն բաժակ ոսկեղէն. ընծայ ի ձօն, այսինքն ընծայեալ ի պարզեւս: Եւ այս տուն միակցորդ ընդ վերին տանն՝ է իբրեւ անուն բայր երրորդ տանն սկսելոյ, ողոք յախտին: Որոց միաւորութիւնն ձեւանայ այսպէս. յողոքիչ աստէն շողոքորթութեան փախչէր Հայոց ազգին գոհարն եւ արամեան տոհմին ոսկի բաժակն՝ Մխիթար արքայն, եղեալն ի դիր հանգըստեան այսր դամբարանին՝ վերտառեալ վիճակ կափուցելոյ:

Արդ ի վախճանի զա՛յս ծանիր, զի վերտառութիւնս այս, այսինքն հոկտորական գովեստս մակազրեալ ի վիճի, բազկանայ ի յերեսուն եւ մի սողից. որոց սկզբնատառքն վերուստ ի վայր հեղեն անվթար զայս բան.

ՔՆԱՐ ՔԱՂՅՐԱԽՕՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՈԳԻՈՅՆ

որ է ի դէպ մեծի հօր մերում Մխիթարայ արքային, որպէս ի Մեկնութենէ առաջին սողիցն ի վերոյ եղեալ ոտանաւորացն քաջայայտ երեւի:

Մեկնեալ՝

Ի ՆՈՐԻՆ ԱՇԱԿԵՐՏԷ
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԳԱՊԵՏԷ

ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՅԻ

ՀԻՄՆԵԳԻՐ ԵՒ ԵՐԵՆՃԱՅՐ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԵՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ.

ԱՂԲԻՐՆԵՐ

ա. Մխիթար Սերաստացւոյ վարքը առաջին անգամ գրի առած է Հ. Մատթէոս Վ. Գարաղաչեան Եւդոկիացի (ծնած 2 մարտ 1689, քահանայացած 1714, վախճանած 6 նոյեմբեր 1772), մասամբ ականջալուր եւ մասամբ ականատես Մխիթարի վարքին եւ գործունէութեան փուլերուն: Ան եղած է Մխիթարի քարտուղարը, խորհրդականն եւ խոստովանահայրը. ինքնին աղբարրակեաց եւ խստակրօն: Այս վարքիս օրինակ մը կայ վեներաբար Մխիթարեան Դիւանին մէջ, տակաւին անտիպ:

բ. Հ. Մատթէոս ունի նաեւ ժամանակագրութիւն մը 50 տարիներու (1700—1750), ուր տուած է ժամանակագրորէն Մխիթարեան Մխարանութեան Պատմութիւնը սկսեալ հիմնարկութեան առաջին տարիէն, նկատի առնելով նաեւ այս շրջանի Հայոց եկեղեցական անցուդարձերը: Այս շատ կարեւոր ժամանակագրութիւնը կը պահուի վեներաբար Մխիթարեան Դիւանը իր սկզբնապիւն մէջ, տակաւին անտիպ: Տպագրութեամբ ծանօթ է նոյն հեղինակի՝ Հ. Մատթէոս Վ. ի Եւդոկիացւոյ Ներբողեանն ի Լուսանորդոց Մխիթար, վեներաբար 1926:

գ. Համառոտութիւն վարուց Մխիթարայ մեծի արքայի: Գրուածքիս հեղինակը ծանօթ է, բայց ըմբարտ է Մխիթարի աշակերտներէն մէկը, որ կազմած է Համառոտութիւնս աչքի առաջ ունենալով Հ. Մատթէոսի վարքն եւ ժամանակագրութիւնը, ինչպէս նաեւ այլ վաւերագրիւններ, որոնք հաւանօրէն անմատչելի մնացած են վարքի հեղինակին: Այս Համառոտութիւնէն ունինք երկու օրինակ, մին վեներաբար Մխիթարեան Դիւանին եւ միւսը Մատենադարանին մէջ: Այս կրկին օրինակներէ առաջին անգամ հրատարակեց վարքս Հ. Վ. Խնգլիզեան (տես աստ, էջ 321 եւ շար.): Գրուածքիս մէջ «Կենսագիր» ըսելով կ'ակնարկեմ այս վարքը:

դ. Դիւանական վաւերագրիւններ, վկայականներ եւ թուղթեր, որոնք կը պահուին վեներաբար Մխիթարեան Դիւանին եւ Հոռմի Ս. Ժողովի Դիւանին մէջ: Մխիթարեան Դիւանէն 190 վաւերագրիւններ 1695—1768 շրջանէն հրատարակուած են Schiarimenti e Documenti (էջ 1—352) անթուական եւ թերի մնացած հաւաքածոյին մէջ, հայերէն բնագրիւնները նաեւ խտաբար թարգմանութեամբ: Ուրիշ շարք մը վաւերագրիւններ (մասամբ քաղուածաբար) թուով 315 տուաւ Հ. Ղեւոնդ Տայեան, Մայր Դիւան Մխիթարեանց վեներաբար ի Ս. Ղազար 1707—1773. վեներաբար 1930: